ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-12/25-I/ECOCENTER

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Լիլիթ Վարուժանի Սահակյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 189 402 500 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3.1 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից, անհրաժեշտության դեպքում, հատկացնել միայն մեկ վարորդի աշխատավարձ և ծառայողական մեկ մեքենայի հետ կապված ծախսեր, այդ թվում՝ սպասարկման և վառելիքի ծախսերը,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 189 402 500 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	**Կազմակերպություն**
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ք.Երևան, Աբովյան 68 Հ/հ՝ 900018005414 ՀՎՀՀ՝ 01506627 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝	Կազմակերպության տնօրեն՝
_____ Կ.Տ.	_____ Կ.Տ.
(ստորագրություն)	(ստորագրություն)
Աշոտ Սերոբի Սաղյան	Լիլիթ Վարուժանի Սահակյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Սահակյան Լիլիթ Վարուժանի

(ստորագրություն)

Հավելված N 1
20 հունվարի 2025թ.
N 1-12/25-I/ECOCENTER պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Լիլիթ Վարուժանի Սահակյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-12/25-I/ECOCENTER պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 189 402 500 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա	**Կազմակերպություն**
Նախագահի՝	տնօրեն՝
_____ Կ.S.	_____ Կ.S.
(ստորագրություն)	(ստորագրություն)
Աշոտ Սերոբի Սաղյան	Լիլիթ Վարուժանի Սահակյան

Հավելված N 2
20 հունվարի 2025թ.
N 1-12/25-I/ECOCENTER պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	10
Այլ պարբերականում հրապարակում՝	7
Գրքեր, մենագրություններ՝	0
Գիտաժողովի նյութեր՝	5

Կազմակերպության տնօրեն՝ _____ Լիլիթ Վարուժանի Սահակյան
(ստորագրություն)

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ Սարգսյան Քրիստինա Վյաչեսլավի
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
20 հունվարի 2025թ.
N 1-12/25-Ի/ECOCENTER պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	172 816 800	34 563 360	43 204 200	43 204 200	51 845 040
2.	տնտեսական ծախսեր՝	5 920 000	1 184 000	1 480 000	1 480 000	1 776 000
3.	այլ ծախսեր՝	10 665 700	2 133 140	2 666 425	2 666 425	3 199 710
Ընդամենը՝		189 402 500	37 880 500	47 350 625	47 350 625	56 820 750

Կազմակերպության տնօրեն՝ _____ Լիլիթ Վարուժանի Սահակյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Տարուշ Վարդանի Իսահակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3.1
20 հունվարի 2025թ.
N 1-12/25-I/ECOCENTER պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**5 920 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	4 900 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	140 000
4.	*կապի ծառայություն*	820 000
5.	*աղբահանություն*	60 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**10 665 700**
1.	Համակարգչային ծառայություն	2 997 960
2.	Դեռատիզացիա	40 000
3.	Հակահրդեհային	180 000
4.	Գույք	274 840
5.	Լաբորատոր նյութեր	2 806 000
6.	Գրասենյակային նյութեր	203 000
7.	Տրանսպորտային վառելիք	260 000
8.	Ծառայություն	291 300
9.	Էկենգ	6 000
10.	Ներկայացուցչական	350 000
11.	Մասնագիտական վերապատրաստում	150 000
12.	Ավտոմեքենաներ ապահովագրական,տեխնիկական ծառայություն	200 000
13.	Գործուղում	1 800 000
14.	Տնտեսական և շինարարական նյութեր	995 000
15.	Գործք	111 600

Կազմակերպության տնօրեն՝ _____ Լիլիթ Վարուժանի Սահակյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Տարուշ Վարդանի Իսահակյան
(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 4
20 հունվարի 2025թ.
N 1-12/25-I/ECOCENTER պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)
B - ամիսների քանակ
C - աշխատաժամանակի ռեժիմ
D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
E - գումարային

՝՝ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Սահակյան Լիլիթ Վարուժանի	Տնօրեն	570 000	12	հիմնական	40	6 840 000
Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	Գիտական գծով փոխտնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Գրիգորյան Եվա Գերմանի	Տնօրենի օգնական	75 000	12	համատեղություն	10	900 000
Գևորգյան Դիանա Անուշավանի	Ընդհանուր բաժնի վարիչ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Իսահակյան Տարուշ Վարդանի	Գլխավոր հաշվապահ	260 000	12	հիմնական	40	3 120 000
Սարգսյան Քրիստինա Վյաչեսլավի	Գիտական քարտուղար	350 000	12	հիմնական	40	4 200 000
Մկրտչյան Մարինա Յուրիի	Կադրերի ավագ տեսուչ	200 000	12	հիմնական	40	2 400 000
Պողոսյան Գայանե Սուրենի	Ամբիոնի վարիչ	114 000	12	հիմնական	40	1 368 000
Գևորգյան Դիանա Անուշավանի	Համակարգչային օպերատոր	70 000	12		0	840 000
Բեյլերյան Անահիտ Նորայրի	Ռեֆերենտ թարգմանիչ	103 000	12	հիմնական	40	1 236 000
Ասատրյան Անի Զոհրաբ	Խմբի ղեկավար	279 800	12	հիմնական	40	3 357 600
Հայրապետյան Էլիզա Հմայակի	Քիմ⊠անալիտիկ	96 620	12	հիմնական	40	1 159 440
Գրիգորյան Մերի Մուրադի	Մեթոդիստ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Ենգիբարյան Գեղամ Լևոնի	Տնտեսվար	140 000	12	հիմնական	40	1 680 000
Սահակյան Գևորգ Գուրգենի	Վարորդ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Երանոսյան Արեգնազ Պարույրի	Դռնապահ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Բելիխ Վալենտինա Ալեքսանդրի	Դռնապահ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Աղաբաբյան Տիգրան Վոլոդյայի	Ինժ⊠էլեկտրիկ	73 000	12	համատեղություն	20	876 000
Մարդանյան Գայանե Հովհաննեսի	Հավաքարար	95 650	12	հիմնական	40	1 147 800
Մարտիրոսյան Ռոզա Հովհաննեսի	Հավաքարար	104 000	12	հիմնական	40	1 248 000
Գրիգորյան Գրիգոր Բաբկենի	Վարորդ	95 650	12	հիմնական	40	1 147 800
Մկրտչյան Մարինա Յուրիի	Գնումները համակարգող	100 000	12		0	1 200 000
Եղոյան Էլեն Արթուրի	Գիտական արդյունքների լուսաբանման պատասխանատու	120 000	12	համատեղություն	40	1 440 000
Կարեյան Տարոն Կարենի	Քաղ.պաշտպանության շտաբի պետ	40 000	12	հիմնական	0	480 000
Թովմասյան Գոհար Հմայակի	Մեթոդիստ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Թովմասյան Գոհար Հմայակի	Գրադարանավար	47 700	12	հիմնական	0	572 400
Վարդանյան Նարինե Հենրիկի	Կրթական ծրագրերի	100 000	12	համատեղություն	10	1 200 000

	համակարգող					
Շեպելևա Աննա Սերգեևնա	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Շրջակա միջավայրի երկրաքիմիայի						
Տեփանոսյան Գևորգ Հովհաննեսի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Հովհաննիսյան Հասմիկ Ալբերտի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Սահակյան Գևորգ Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Գևորգյան Աստղիկ Տիգրանի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Պողոսյան Ժենյա Անդոկի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Ենոքյան Տաթևիկ Գագիկի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Դավթյան Կարինե Արարատի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Ղարիբյան Ինա էդիկի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Սանամյան Սոնա Խորենի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Սարիբեկյան Անի Էդուարդի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Բաժին Ռադիոէկոլոգիայի						
Բելյաևա Օլգա Ալեքսանդրի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Փյուսկյուլյան Կոնստանտին Իվանի	Ավագ գիտաշխատող	171 634	12	համատեղություն	20	2 059 608
Մովսիսյան Նոնա Էդիկի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Հովհաննիսյան Սպարտակ Մարատի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Կոստանյան Մանե Վարդանի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Բաժին Կենսաէներգետիկայի և կերերի որակի						
Սահակյան Լիլիթ Վարուժանի	Ղեկավար	300 000	12	ներքին համատեղություն	20	3 600 000
Ալեքսանյան Վալերի Ալեքսանդր	Գիտաշխատող	137 902	12	հիմնական	20	1 654 824
Սարգսյան Անյուտա Վալերի	Գիտաշխատող	137 902	12	համատեղություն	20	1 654 824
Սարգսյան Տաթևիկ Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Բաժին Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի և հեռազննման						
Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	Ղեկավար	238 435	12	ներքին համատեղություն	20	2 861 220
Հովսեփյան Ազատուհի Արծրունու	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Ավետիսյան Անի Արմենի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Բաղդասարյան Աշոտ Սարգսի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Մկրտչյան Անահիտ Գոռի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Խումբ Տվյալագիտության և մեքենայական ուսուցման						
Մուրադյան Վահագն Սոսի	Ղեկավար	205 034	12	համատեղություն	20	2 460 408
Խլղաթյան Անահիտ Նշանի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Ավետիսյան Ռիմա Արմենի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Խումբ Գերբարձր յուծաչափի հեռազննման						

Մեդվեդև Անդրեյ Ալեքսանդրի	Ղեկավար	307 551	12	համատեղություն	30	3 690 612
Այվազյան Գրիգոր Միհրի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Սերեդա Իգոր Իգորի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	համատեղություն	40	2 523 912
Կենտրոն Սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվության և վերլուծության						
Պիպոյան Դավիթ Աշոտի	Ղեկավար	476 870	12	հիմնական	40	5 722 440
Հարությունյան Բագրատ Միխաիլի	Գիտաշխատող	100 000	12	համատեղություն	10	1 200 000
Սիրեյան Լիանա Արայիկի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Խաչատրյան Մոնիկա Վարդանի	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Արշակյան Եպրաքսյա Հայկի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Կարեյան Տարոն Կարենի	Լաբորանտ	138 233	12	հիմնական	40	1 658 796
Առաքելյան Հայկանուշ Թադևոսի	Լաբորանտ	69 117	12	համատեղություն	20	829 404
Աղաբաբյան Միքայել Կարենի	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Խումբ Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման						
Բեգլարյան Մելինե Ռադիկի	Ղեկավար	410 068	12	հիմնական	40	4 920 816
Հովհաննիսյան Աստղիկ Սերգեյի	Կրտսեր գիտաշխատող	210 326	12	հիմնական	40	2 523 912
Աբրահամյան Արմեն Սարգսի	Լաբորանտ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Խումբ Լաբորատոր խումբ						
Բաբայան Գայանե Հրանտի	Գիտաշխատող	275 804	12	հիմնական	40	3 309 648
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						17790060
Ընդհանուր գումար՝						172 816 800

Կազմակերպության տնօրեն՝ _____ Լիլիթ Վարուժանի Սահակյան
(ստորագրություն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ _____ Մարիաննա Գրիգորի Մուրադյան
(ստորագրություն) (ԱԱՀ)

Կ. Տ.

Հավելված N 5
«20» հունվարի 2025 թ.
N 1-12/25-I/ECOCENTER պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ծրագիրը նպատակաուղղված է իրականացնելու ՀՀ տարբեր տարածքների էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատում, էկոլոգիական, առողջական և սնման շղթայի ռիսկի գործոնների բացահայտում և գնահատում, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակում՝ նորագույն նորարարական տեխնոլոգիաների և միջազգայնորեն ընդունված մեթոդների կիրառմամբ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Ծրագրով նախատեսված հիմնարար և կիրառական բնույթի միջգիտակարգային հետազոտություններն ուղղված են ՀՀ տարբեր տարածքների էկոլոգիական իրավիճակի համալիր գնահատմանը, էկոլոգիական և առողջական ռիսկի գործոնների բացահայտմանն և գնահատմանը, էկոլոգիական փորձաքննության գիտամեթոդական հիմունքների մշակմանը, մարդու էկոլոգիային առնչվող խնդիրների լուծմանը, բնական ռեսուրսների կառավարման գործընթացների բարեփոխմանը, սննդի անվտանգությանն ու սննդային շղթայի ռիսկերի բացահայտմանը և գնահատմանը: Նշված հետազոտությունները հիմնականում առնչվում են ազգային անվտանգության նշանակություն ունեցող հարցերին:

Ծրագրի հայեցակարգը ամբողջովին համապատասխանում է Շրջակա միջավայրի (ՇՄ) պահպանության ոլորտում հետազոտությունների զարգացման համաշխարհային միտումներին: Ծրագրում ներկայացված խնդիրներն իրենց արտացոլումն են գտել ՀՀ-ի կողմից վավերացված և/կամ վավերցման գործընթացքում գտնվող միջազգային կոնվենցիաներում և նախատեսվող հետազոտությունները կնպաստեն ստորև նշված կոնվենցիաներից բխող՝ հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը (անապատացման դեմ պայքարի, կենսաբանական բազմազանության, միջսահմանային կոնտեքստում ՇՄ-ի ազդեցության գնահատման և այլ կոնվենցիաներ): Ծրագիրը բխում է նաև ԵԱՏՄ ստանձնած պարտավորությունների կատարման, մասնավորապես՝ քիմիական, կենսաբանական և ֆիզիկական վտանգների ներազդեցության արդյունքում ազգաբնակչության առողջական ռիսկերի գնահատման համար անհրաժեշտ միասնական մեթոդներով ռիսկի գնահատման պահանջից: Երկրաբնապահպանական հիմնահարցերի արդիականությունը արտացոլված է ՀՀ ԳԱԱ Նախագահության մի շարք որոշումներում:

Ծրագրով նախատեսված հետազոտությունները միջգիտակարգային են (երկրաբանություն, աշխարհագրություն, կենսաբանություն, քիմիա, մաթեմատիկա SS և այլն), որոնք միավորում են երկու գիտական ուղղություններ՝ երկրաբնապահպանություն (գեոէկոլոգիա) և շրջակա միջավայրի գիտություններ: Հետազոտությունների հիմնական խնդիրն է՝ կիրառելով վերոնշյալ գիտական ուղղությունների գիտամեթոդական հիմքն ու մեթոդական

մոտեցումները, հասկացական ապարատը, ստեղծել էկոլոգիական և շրջակա միջավայրային վտանգների կանխորոշման մեթոդաբանություն, մշակել տեխնածին գործընթացներից առաջացող վնասի նվազեցման տեխնոլոգիաներ և միջոցառումներ, ի հայտ բերել ռիսկային տարածքներ և խմբեր, վեր հանել քիմիական տարրերի պարունակությունների բնական հավասարակշռության խախտման պատճառներն ու գտնել նրանց կառավարման եղանակները և կիրառել ստացված արդյունքները՝ հասարակության էկոլոգիական անվտանգությանն ուղղված գիտահեն որոշումների կայացման ընթացքում:

Հետազոտությունների փորձարարական և լաբորատոր մասը կապահովվի ISO պահանջներին բավարարող սարքավորումներով և մեթոդներով հագեցած քիմիական լաբորատորիան: Հետազոտությունների իրականացման համար կօգտագործվեն արբանյակային ակտիվ և պասիվ համակարգերի բազմասպեկտրալ, ռադարային տարբեր տարածական, սպեկտրալ, ժամանակային լուծաչափի լուսանկարներ, անօդաչու թռչող սարքեր՝ բազմասպեկտրալ, ջերմային նկարահանման և լազերային սքանավորման խցիկներով, մեքենայական ուսուցման ալգորիթմներ՝ տեղեկատվական բազաների մշակման և մոդելավորման, ԱՏՀ ու հեռազննման տեխնոլոգիաներ թեմատիկ թվային քարտեզների մշակման նպատակով: Աշխատանքներն իրականացվելու են Էկոկենտրոնի հմուտ և բարձրորակ անձնակազմով, որոնց մի մասը մասնագիտական վերապատրաստում է անցել ՌԴ-ի, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի և այլ երկրների առաջատար գիտական կենտրոններում և տարբեր տեղական և միջազգային որակավորման դասընթացներում:

Հատկանշական են Կենտրոնում նոր ձևավորված «Գերբարձր լուծաչափի հեռազննման», «Տվյալագիտության և մեքենայական ուսուցման» և «Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման» խմբերը, որոնցից առաջին և երկրորդ խմբերն ապահովում են հետազոտությունների ընթացքում համապատասխանաբար գեոէկոլոգիական հետազոտություններում գերբարձր լուծաչափի (<2սմ) ԱԹՍ և դաշտային սպեկտրոմետրիկ եղանակով տվյալների ստացումը և դրանց մշակումը ժամանակակից ՄՈ մեթոդներով, իսկ երրորդ խումբն ապահովում է սննդի սպառման և սննդանյութերի ընդունման գնահատման համար սննդակարգային հետազոտությունների իրականացումը:

Կենտրոնում գործում են «Բնապահպանություն և բնօգտագործում» մագիստրոսական և ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնները, որոնցում պատրաստվում են անհրաժեշտ որակավորման երիտասարդ մասնագետները: Առկա է նաև հայցորդների և ասպիրանտների ուսուցման հնարավորությունը, որն ապահովում է ակտիվ գիտնականների որակավորումը: Հատկանշական է Կենտրոնի ակտիվ ներգրավվածությունը 2024թ.-ին մեկնարկած Հայաստանի, բարձրագույն կրթական սեկտորում կառուցվածքային փոփոխություններին, մասնավորապես միկրոորակավորումների ներմուծման և լայն տարածման միջազգային գործընթացին՝այդպիսով, շարունակելով նաև լայն համագործակցությունը ՀՀ տարբեր պետական և մասնավոր ԲՈՒՀ-երի, ՄՈՒՀ-երի և դպրոցների հետ:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

2025թ.-ին ծրագրով նախատեսված է շարունակել երկրաբնապահպանական/ՇՄ և էկոլոգիական, սննդի անվտանգության հիմնահարցերին ուղղված միջգիտակարգային հիմնարար և կիրառական բնույթի հետազոտությունները, որոնք բերված են ստորև՝ ըստ առանձին ուղղությունների և ստորաբաժանումների.

<u>Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին.</u> շարունակվելու են շրջակա միջավայրի որոշ բաղադրիչների քիմիական կազմի ուսումնասիրությանը և վերջիններիս նյութի միներալոգիական կազմի հետ փոխկապակցվածության բացահայտմանը, պոտենցիալ

տոքսիկ տարրերի պարունակություններով պայմանավորված ռիսկերի գնահատմանն ուղղված հետազոտությունները: Նախատեսվում է շարունակել

- Շրջակա միջավայրի որոշ բաղադրիչների քիմիական և միներալոգիական կազմի փոխկապակցվածության ուսումնասիրություն՝ ցուցանիշների փոխկապակցվածության առանձնահատկությունների վերհանման նպատակով:
- Հրազդան գետի՝ Երևան քաղաքի տարածքով անցնող հատվածի, հատակային նստվածքների հետազոտությունները՝ գետային համակարգի էկոլոգիական ռիսկի գնահատման նպատակով:

<u>Ռադիոէկոլոգիայի բաժին.</u> Ուրանաբեր գոտու առկայությամբ, Սևանա լճավազանի տարածքում բնական ռադիոակտիվ նյութերի բաշխվածության ու միգրացիայի մասին տվյալների սակավությամբ և մարզի գյուղատնտեսական տեսանկյունից կարևորությամբ պայմանավորված խիստ կարևոր և արդիական են Գեղարքունիքի մարզում ռադիոէկոլոգիական հետազոտությունները: Ուստի 2025թ.-ին նախատեսվում է իրականացնել ռադիոէկոլոգիական հետազոտություններ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքում բնական և տեխնածին ռադիոնուկլիդների ակտիվության բաշխվածության օրինաչափությունների բացահայտման ուղղությամբ՝ առաջադրելով հետևյալ խնդիրները. ա) Գեղարքունիքի տարածքից նմուշառված հողերում, գետերի հատակային նստվածքներում բնական ու տեխնածին ռադիոնուկլիդների նույնականացում և տեսակարար ակտիվության որոշում, բ) ռադիոնուկլիդների ակտիվության բաշխվածության քարտեզագրում Գեղարքունիքի մարզի տարածքում, գ) շրջակա միջավայրում ռադիոնուկլիդներով պայմանավորված մարդու առողջական (քաղցկեղածին) ռիսկի գնահատում:

<u>Կենսաէներգիայի և կերային ռեսուրսների բաժին.</u> Բնական էկոհամակարգերի կայունության պահպանման կարևոր երաշխիք են հանդիսանում բուսածածկի անհատական տեսակների տնտեսական, կենսաչափական, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական չափորոշիչները: Նախատեսվում է իրականացված աշխատանքների գույքագրում, տվյալների հենքի ստեղծում ու ամփոփում՝ ՀՀ տարբեր տարածքների խոտհարքներում:

<u>ԱՏՀ և հեռազննման բաժին.</u> Լեռնային բնատարածքային համալիրների պահպանմանն ու տարածական պլանավորմանն ուղղված գիտահեն որոշումների կայացման նպատակով նախատեսվում է շարունակել նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների և լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի մշակմանն ուղղված աշխատանքները: Նախատեսվում է շարունակել

- ՀՀ քաղաքային և գյուղատնտեսական տարածքներում լանդշաֆտային բաղադրիչների (օդ, հող, ջուր, բույս) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների կատարելագործման աշխատանքները՝ մասնավորապես, արբանյակային, ԱԹՍ ջերմային և բազմասպեկտրալ լուսանկարահանմամբ և սպեկտրոռադիոմետրիկ եղանակով բնական և մարդածին օբյեկտների էկոլոգիական վիճակի հեռազննման հայտանիշների ստացման ուղղությամբ:
- ՀՀ տարածքի մակերևութային ծածկի տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման և առանձին հողատեսքերի (արոտներ, խոտհարքեր, պտղատու այգիներ և այլ) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների մշակման աշխատանքներ:

<u>«Տվյալագիտության և մեքենայական ուսուցման»</u> խմբի կողմից իրականացվելու են հեռազննման տվյալների վերծանման համաշխարհային գրադարաններում առկա ալգորիթմների ուսումնասիրման և՝ բաժնի հետազոտական աշխատանքներում,

ծրագրավորմամբ և արհեստական բանականության մոդելների կիրառմամբ, դրանց ադապտացման աշխատանքները:

«*Գերբարձր լուծաչափի հեռազննման*» խմբի կողմից իրականացվելու են գերբարձր տարածական լուծաչափի (<2սմ) ԱԹՍ պատկերներից ստացվող բազմասպեկտրալ, ջերմային տվյալների ստացման և դրանց մշակման մեթոդական մոտեցումների մշակման և բաժնի հետազոտական աշխատանքներում դրանց ներդման աշխատանքները:

Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվավերլուծական կենտրոն ՀՀ-ն անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) ու Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), որի համաձայնագրի հիմնարար սկզբունքներից են սննդամթերքի անվտանգության, կյանքի և առողջության բարձր մակարդակի ապահովումը՝ սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման գիտահեն գործընթացի միջոցով: Պլանավորվող աշխատանքների նպատակն է աջակցել երկրում սննդամթերքի անվտանգության ապահովման ռիսկերի վրա հիմնված համակարգի զարգացմանը, Հետևաբար նախատեսվում է շարունակել քիմիական վտանգների ներգործությամբ պայմանավորված առողջական ռիսկերի բնութագրման աշխատանքները:

«Պարենային անվտանգության» խմբի պլանավորվող աշխատանքների նպատակն է բնակչության սնման կարգավիճակի գնահատումը, հետևաբար նախատեսվում է շարունակել բնակչության սննդակարգի ուսումնասիրման աշխատանքները, մասնավորապես միկրո և մակրո սննդանյութերի ընդունման գնահատումը:

UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոնն իր կրթական, հետազոտական և ինովացիոն գործունեությամբ շարունակելու է աջակցել միջազգային կարևոր՝ «Կրթություն հանուն կայուն զարգացում», «Ցկյանս ուսումնառություն» ինչպես նաև «դեպի կանաչ տնտեսություն կայուն զարգացման աջակցում՝ ներգրավելով հանրակրթությունը և մասնագիտական կրթությունը» գործընթացներին՝ նպաստելով գիտության ոլորտի 3 (կրթական, հետազոտական և ինովացիոն) բաղադրիչների ինտեգրմանն ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներով: Ամբիոնը կշարունակի հնարավոր համագործակցությունը Էկոկենտրոնի կազմում գործող «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստման գործընթացին՝ ապահովելով համապատասխան տեղեկատվություն և ինտերակտիվ մեթոդներ: Էկոկենտրոնի լաբորատոր խումբը իրականացնելու է Էկոկենտրոնի տարբեր ստորաբաժանումների կողմից պատվիրակվող տարրալուծման աշխատանքները, նոր մեթոդների մշակում և ներդրում:

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (___Լ. Սահակյան___)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (____Լ. Սահակյան____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 6
«20» հունվարի 2025 թ.
N 1-12/25-I/ECOCENTER պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Շրջակա միջավայրի երկրաբնապահպանական հետազոտություններ» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	**Շրջակա միջավայրի երկրաքիմիա**	Շրջակա միջավայրի երկրաքիմիական հետազոտություններ ՀՀ տարբեր շրջաններում:	Շրջակա միջավայրի որոշ բաղադրիչների քիմիական և միներալոգիական կազմի փոխկապակցվածության ուսումնասիրություն:	I- II
			Հրազդան գետի (ք. Երևանի տարածք) հատակային նստվածքների նմուշառում և անալիզ	II-III
			Արդյունքների ամփոփում, Հոդվածների մշակում Հաշվետվությունների կազմում:	IV
2	**Ռադիոէկոլոգիայի բաժին**	Գեղարքունիքի մարզից հավաքված նմուշներում ռադիոնուկլիդների նույնականացում և ակտիվության որոշում	Նմուշների գամմա սպեկտրաչափություն, հեղուկ սցինտիլյացիոն ռադիոմետրիա	I-II
		Ռադիոլոգիական ցուցանիշների հաշվարկ և քարտեզների մշակում	Հողային և հատակային նստվածքների նմուշների ռադիոնուկլիդային կազմի հիման էկոլոգիական և առողջական ռիսկի գնահատում ռադիոլոգիական ցուցանիշների հիման վրա	III
		Արդյունքների վերլուծություն և ամփոփում	Գիտական հոդվածների բնագրերի նախապատրաստում, հրատարակում: Հաշվետվության նախապատաստում	IV
3	**Կենսաէներգե-տիկայի և կերերի որակի բաժին**	Բնական խոտհարքների բուսածածկի անհատական տեսակների որոշ ցուցանիշների ուսումնասիրություն	Առկա աշխատանքների գույքագրում, դաշտային և լաբորատոր տվյալների հենքի համակարգչային բազայի ստեղծում	I-II
			Միջազգային և տեղական գրականության տվյալների բազայի հիմնում: Ցուցանիշների հաշվարկների ամփոփում և վերլուծություն	II-III

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

			Նյութերի նախապատրաստում՝ հաշվետվության և հոդվածների համար	IV
4	**ԱՏՀ և հեռազննման տեխնոլոգիաների բաժին**	Նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ լանդշաֆտային կայունության գնահատման գիտամեթոդական հիմունքների և լանդշաֆտների էկոլոգիական մոնիթորինգի հեռազննման համակարգի մշակմանն ուղղված աշխատանքների շարունակում	ՀՀ քաղաքային և գյուղատնտեսական տարածքներում լանդշաֆտային բաղադրիչների (օդ, հող, ջուր, բույս) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների կատարելագործման աշխատանքների իրականացում՝ մասնավորապես արբանյակային, ԱԹՍ ջերմային և բազմասպեկտրալ լուսանկարահանմամբ և սպեկտրոռադիոմետրիկ եղանակով բնական և մարդածին օբյեկտների էկոլոգիական վիճակի հեռազննման հայտանիշների ստացման ուղղությամբ	I-II
			ՀՀ տարածքի մակերևույթային ծածկի տարածաժամանակային փոփոխության քարտեզագրման և առանձին հողատեսքերի (արոտներ, խոտհարքեր, պտղատու այգիներ և այլ) էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդների մշակման աշխատանքներ:	III-IV
5	**Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոն**	Սննդամթերքում քիմիական վտանգների ներգործության գնահատում	Շարունակվելու են սննդամթերքի սպառման և քիմիական վտանգների պարունակության տվյալների համադրմամբ ռիսկի գնահատման աշխատանքները	I-II
		Սննդանյութերի ընդունման գնահատում	Բնակչության տարբեր խմբերի համար սննդանյութերի ընդունման գնահատում	III
		Աշխատանքների ամփոփում	Քիմիական վտանգների ներգործությամբ պայմանավորված ռիսկերի և սնման կարգավիճակի բնութագրում	IV
6	**UNESCO-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ամբիոն**	«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության շրջանակներում մագիստրոսական կրթության աջակցություն	Շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ մագիստրոսական թեզերում նորարության ներմուծում, սեմինար վարժանքների կազմակերպում, թրեյնինգների իրականացում	I
		Կայուն զարգացման առանցքային թեմաներով էկոկրթական դասընթաց-սեմինարների, ամառային	«Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի և Էկոկենտրոնի տարբեր բաժինների հետ համատեղ գիտակրթական ծրագրերի և	II

		դպրոցների իրականացում և լուսաբանում	միջոցառումների իրականացում և լուսաբանում, մասնակցություն հետազոտական փորձերին	
		«Կրթություն հանուն կայուն զարգացման», «Կրթություն ողջ կյանքի ընթացքում» գործընթացների շրջանակներում գիտակրթական հետազոտությունների իրականացում:	«Կրթություն ողջ կյանքի ընթացքում» մոդելի փորձարկում և տարածում հանրակրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտում	III
		Տեղական և միջազգային համագործակցության ընդլայնում, բնապահպանական գիտակրթական ծրագրերի բազաների պարբերաբար լրամշակում: GLOBE ցանցի հնարավորությունների օգտագործում բնապահպանական նախագծերում:	Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կապերի ընդլայնում, տեղեկատվության փոխանակում GLOBE, UNITWIN Networks, Info CENN, EENCE և այլ ցանցերում:	IV

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (___Լ. Սահակյան____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (___Լ. Սահակյան____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*